



Լոս Անջելեսի Շրջան ԵՐԲ ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԿՐԵՔ ԴԻՄԱԿ

4-21-22: Դիմակ կրելը շարունակվում է պահանջվել որոշ հաստատություններում եւ խստորեն հորդորվում է մյուս վայրերում. տե՛ս՝ ամփոփագիրը ստորև, իսկ մանրամասները՝ [Առողջության Պատասխանատուի Հրամանում](#):

Խստորեն հորդորվում է, որ մարդիկ շարունակեն կրել դեմքը [լավ գրկող և օդը լավ գտող](#) դիմակներ բոլոր փակ հանրային վայրերում: COVID-19-ի տարածումը շարունակում է մեծ վտանգ ներկայացնել Լոս Անջելեսի Շրջանի շատ բնակիչների համար:

ԲՈԼՈՐԸ*, անկախ պատվաստման կարգավիճակից, ՊԵՏՔ Է կրեն դիմակ՝
<ul style="list-style-type: none"> • Լոս Անջելեսի Շրջանի բոլոր հանրային փոխադրամիջոցներում: Դրանք ներառում են՝ գնացքները, ավտոբուսները, տաքսիները և երթուղային տաքսիները: • Լոս Անջելեսի Շրջանի փոխադրամիջոցների բոլոր կենտրոնների փակ վայրերում՝ ներառյալ օդանավակայանի և ավտոբուսի վերջնակայանները, երկաթուղային և մետրոյի կայարանները, նավահանգիստները կամ այլ փակ նավահանգստային վերջնակայաններ կամ ցանկացած այլ փակ վայր, որը ծառայում է որպես փոխադրամիջոցների կենտրոն: • Առողջապահական ծառայություններ տրամադրող վայրերում • Երկարաժամկետ խնամքի հաստատություններում/ծերանոցներում • Նահանգային և տեղային ուղղիչ հիմնարկներում և կալանավայրերում • Ապաստարաններում և հովացման կենտրոններում • Ցանկացած այլ վայրերում, որտեղ դա հանդիսանում է տվյալ բիզնեսի կամ վայրի քաղաքականությունը:
ԽՍՏՈՐԵՆ ՀՈՐԴՈՐՎՈՒՄ Է կրել դիմակ ԲՈԼՈՐ ԱՆՁԱՆՑ՝
<ul style="list-style-type: none"> • Ինքնաթիռներում • Փակ հանրային հաստատություններում և բիզնեսներում, ինչպիսիք են մանրածախ առևտրի կենտրոնները, ռեստորանները, թատրոնները, ընտանեկան ժամանցի կենտրոնները, թղթախաղի սրահները, հանդիպումների վայրերը, հանրությանը ծառայող պետական և տեղական ինքնակառավարման հաստատություններում • K-12 դպրոցների և ցերեկային խնամքի հաստատությունների փակ տարածքներում
Դիմակ կրելու վերաբերյալ լրացուցիչ հորդորներ
<ul style="list-style-type: none"> • Խստորեն խորհուրդ է տրվում փակ կամ մարդաշատ բացօթյա վայրերում դիմակ կրել ծանր հիվանդանալու բարձր վտանգի ներքո գտնվող անձանց և այն անձանց, որոնք ապրում են բարձր վտանգի ներքո գտնվող անձի հետ: Անհրաժեշտ է կրել դիմակներ, որոնք տրամադրում են լավագույն պաշտպանություն COVID-19-ից: Օրինակները ներառում են դեմքը լավ գրկող դիմակներ (օրինակ՝ N95, KN95) կամ կրկնակի դիմակներ (բժշկական դիմակի վրայից դեմքը լավ գրկող կտորե դիմակ): • Խստորեն հորդորվում է կրել դիմակ այն անձանց, որոնք հավաքվում են փակ տարածքներում ծանր հիվանդանալու բարձր վտանգի գոտում գտնվող անձանց հետ:

Ծանոթություն: Դուք կարող եք հանել ձեր դիմակը, երբ դուք՝

- Այդ պահին ուտում կամ խմում եք:
- Մենակ եք առանձին սենյակում կամ տարածքում:
- Լոգանք եք ընդունում կամ լողում եք:
- Ստանում եք անձնական հիգիենայի կամ անձնական խնամքի ծառայություններ (օրինակ՝ դեմքի խնամք կամ սափրում), որոնք հնարավոր չէ կատարել առանց ձեր դիմակը հանելու:

*Կան որոշ մարդիկ, որոնք չպետք է դիմակ կրեն, օրինակ՝ 2 տարեկանից փոքր երեխաները, որոշակի առողջական խնդիրներ կամ հաշմանդամություն ունեցող անձինք և այն անձինք, որոնց բուժաշխատողը կարգադրել է չկրել դիմակ: 2-ից 8 տարեկան երեխաները պետք է կրեն դիմակ միայն մեծահասակների հսկողության ներքո: Դեմքի ծածկոցների այլընտրանքային տեսակների մանրամասների և տեղեկատվության համար տե՛ս [Ովքեր չպետք է դիմակ կրեն](#) և [Հատուկ նկատառումներ հաղորդակցման դժվարություններ կամ որոշակի հաշմանդամություն ունեցող անձանց համար](#):

Դիմակների տեսակների և Լոս Անջելեսի Շրջանում դիմակներ կրելու կանոնների և առաջարկությունների մասին ավելին իմանալու համար այցելեք ph.lacounty.gov/masks կայքէջ:

